ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան «11» մայիսի 2021թ.

«ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» /այսուհետ՝ Ընկերություն/, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ Վարչական շրջանի ղեկավար Վահրամ Պետրոսյանի, մի կողմից, և **«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի «ՄԱԼԱԹԻԱ» ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ**, ի դեմս կառավարիչ Աշոտ Գրիգորյանի այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը Պատվիրատուի ներկայացրած 1 /մեկ/ հատ տրանսպորտային միջոցի տեխ.զննության անցկացման համար տրամադրում է նույնքան տեխնիկական զննման կտրոն ՀՀ կառավարության «31» Մարտի 2011թ. թիվ 350-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների հաշվառման և հատկացման կարգի» համաձայն յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար պահանջվող փաստաթղթերը և սահմանված վճարների կատարումը Պատվիրատուի կողմից ապահովելու դեպքում այսուհետ՝ «Ծառայություններ»:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է 05.05.2021թ-ից մինչև 14.05.2021թ-ը:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1.Կատարողը պարտավոր է՝

2.1.1.Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2.Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում.

2.1.3.Պատվիրատուի պահանջով վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները.

2.1.4.Պատվիրատուի կողմից կատարվող բնապահպանման վճարները, պետ տուրքերը և տեխ. զննման համար կատարվող վճարները, որը կազմում է 13525 /Տասներեք հազար հինգ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, սահմանված կարգով փոխանցել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին:

2.2.Պատվիրատուն պարտավոր է Ծառայության դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված սակագինը և կատարել 2.1.4. կետում նշված վճարումները «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի **2470048722600000** տեխ. Զննում անկանխիկ" տարանցիկ հաշվեհամարին:

3. Վարձատրությունը

3.1.Պատվիրատուն յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի տեխ.զննության կտրոնի տրամադրման համար Կատարողին վճարում է միջնորդավճար՝ 1000/մեկ հազար/ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի **247004872260 0000** տեխ. Զննում անկանխիկ" հաշվեհամարին:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1.Կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու դեպքում կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Վեճերի լուծման կարգը

5.1Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.Եզրափակիչ դրույթներ

6.1.Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով. եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

6.2.Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀՎՀՀ 01804548 Ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ	*«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի «ՄԱԼԱԹԻԱ» ՄԱՄՆԱՃՅՈՒՂ* *հասցե ք.Երևան Սեբաստիա 32* *ՀՎՀՀ 02566492* *Կառավարիչ՝ Ա.Գրիգորյան* Կ.Տ.